

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՊՐՈՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՆՈՐԱՅՐ ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՆ՝ «ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ
ՎԱԼԵՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍՍԱՎԱՆԴՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Նարինե Բաղրամյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Աղավնի Մնացականյան

Պատրաստ է պաշտպանության

ԱՇՏԱՐԱԿ 2022Թ.

Բովանդակություն

1.Ներածություն	2էջ
Գլուխ 1.Հայաստանը մարդկության գոյամարտիկն է	3էջ
1.1Մարդու էկոլոգիական կուլտուրա	4էջ
1.2Մոլորակը մեր միակ ընդհանուր տունն է	4էջ
Գլուխ 2.Ինչ է <<էկոլոգիական ոտնահետքը>>	6էջ
2.1<<Կանաչ հոսթինգ>>	7էջ
2.2Ածխաթթու գազի արտանետումները բջջային հեռախոսների օգտագործումից	9էջ
2.3Տաս հարց, որ կարող են փոխել մեր կյանքը և <<Առողջացնել մեր մոլորակը>>	10էջ
2.4Ինչպես կրճատել <<էկոլոգիական ոտնահետքը>>	13էջ
Գլուխ 3. Էկոլոգիայի և վալեոլոգիայի հիմնախնդիրը, նպատակը, ուսումնասիրման մեթոդները, արդիականությունը	15էջ
Գլուխ4. Եզրակացություններ և առաջարկություններ	16էջ
Օգտագործված գրականության ցանկ	17էջ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական դպրոցի պահանջներին համապատասխան՝ այսօր մեծանում է բնագիտական առարկաների միջև կապերի բացահայտման դերն ու նշանակությունը: Այն ճիշտ և խելացի կազմակերպելու դեպքում կհարստանան և կընդլայնվեն սովորողների գիտելիքները: Ժամանակակից գիտության բոլոր ճյուղերը սերտորեն կապված են, և դա պետք է արտահայտվի նաև դասավանդման ընթացքում:

Դպրոցի առջև դրված կարևոր խնդիրներից մեկը սովորողների ընդհանուր ուսումնական կարողությունների ու հմտությունների զարգացումն է, որում մեծ ներդրում կարող է ունենալ կենսաբանության ուսուցիչը:

Ընդհանուր ուսումնական կարողություններից են պլանի, սեղմագրի, թեզի կազմումը, աշխատանքը սկզբնաղբյուրի հետ / դասագրքից, տեղեկագրքերից, տարբեր աղբյուրներից օգտվելը/, որոնք կարևոր են ոչ միայն դպրոցում լավ սովորելու համար, այլև հետագա կյանքում գիտելիքների ձեռքբերման, դրանց կենցաղում, անձանոթ իրավիճակներում կիրառելու համար: Այսինքն աշակերտի ձեռք բերած գիտելիքները պետք է ծառայեն ոչ միայն թեստ գրելուն, այլ կյանքի ծանոթ և անծանոթ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելուն: Դրա համար ցանկացած ուսուցիչ պետք է իմանա սովորողին ներկայացվող ընդհանրական պահանջների համազարգը ըստ հանրակրթության պետական չափորոշի:

Երկիր մոլորակի ծանր վիճակը, որը ստեղծվել է մարդու չկշռադատված, չտրամաբանված, անհեռատես գործունեության հետևանքով պահանջում է հրատապ լուծում ապահովող գործընթացների իրականացում: Այսօր աշխարհի զարգացած շատ երկրներում կատարվում են մեծ ծավալով աշխատանքներ, կուտակվել է էկոլոգիական հիմնախնդիրների լուծման լուրջ փորձ: Նոր կրթական համակարգը կոչված է ձևավորելու շրջակա միջավայրի հանդեպ նոր, էկոլոգիական և վալեոլոգիական մտածողությամբ օժտված անդամ: Էկոլոգիական կրթությունը ենթադրում է անհատի ձևավորում որն օժտված լինի մարդու և բնության ստեղծած արժեքները պահպանելու անհրաժեշտության

գիտակցությամբ:

Աշակերտների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորումը պետք է կատարվի ոչ միայն բնական գիությունների ուսումնասիրությամբ, այլ ողջ ուսումնադաստիարակչական պրոցեսում: Էկոլոգիական և վալեոլոգիական խնդիրները պետք է կազմեն բնագիտական բոլոր դասընթացների բաղադրիչ մասը: Էկոլոգիական գիտակցության ձևավորումը ենթադրում է էկոլոգիական գիտելիքների, խնդիրների և դրանց հնարավոր լուծումների ունակությունների ձևավորում:

Այսօր երիտասարդ սերնդին պետք է զինել նաև առողջ ապրելակերպին միտված ճիշտ դիրքորոշում ձևավորելով, ճնշումների դիմակայելու, կշռադատված որոշում կայացնելու որոշումներով և գիտելիքներով:

Հայաստանը մարդկության գոյամարտիկն է, հետևապես՝ հանուրին հուզող իր կենսագոյությանն առնչվող որևէ հարց, այդ թվում բնապահպանականը չի կարող խորթ լինել մեր ժողովրդին: Առասպել է թե իրողություն՝ Արարատից է սկիզբ առել մարդկության արդի քաղաքակրթությունը: Իսկ Սուրբ Լեռան շուրջ բնակվող և նոյյան առասպելին մասնակից ժողովուրդը չի կարող մարդկության գոյապահպանական ճակատագրի հանդեպ անտարբեր լինել: Շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրը, բոլոր իր երեք ձևերով միջազգայինից, տարածաշրջանայինից զատ՝ ազգային խնդիր է, որի լուծումը, առաջին հերթին ամեն մի պետության սեփական մտահոգության առարկան է:

Օ՛րհունություն, օ՛ր Մայր:

Եվ այնպես – սիրելի ես դու խիզախներին միայն,

Եվ մայրական անեզր համբերությամբ –

Քո գաղտնիքները, քո ուժերը նրան

Հանձնել ես ստեղծարար մի գերության...

Եղիշե Չարենց

Յուրաքնչյուր սերունդ, կամա թե ակամա՝ դաստիարակվում է շրջակա միջավայրի, բնության պահպանության ու վերարտադրության բնական հարստությունների արդյունավետ օգտագործման անհրաժեշտության գիտակցությամբ: Ինչ է հարկավոր անել ճգնաժամային սահմանագծին հայտնված Երկիր մոլորակն օրավուր սաստկացող փորձություններից զերծ պահելու, իրեն սպառնացող <<ձեռակերտ>> վտանգների առաջն առնելու համար: Ինչ է պահանջվում հատկապես այժմ մարդ-արարածից: Արդյոք կան ուղիներ ու միջոցներ, որոնք կարգելակեն առկա կործանարար միտումներն ու դրսևորումները: Այդ հրամայականը հնարավոր է և իրագործելի, եթե մարդկությունը ազգությունից, կրոնից ու աշխարհայացքից անկախ՝ այսուհետև ավելի խելամիտ լինի, որակապես փոխի իր վարկագիծը, բնության հետ համագոյակցելիս առաջնորդվի Երկիր-բնության իրեն պարզև տրված այդ մեծագույն հարստության նկատմամբ սիրով, գթասրտությամբ ու հոգատարությամբ: Նման շրջադարձը, որպես առաջնային հիմնարար նախադրյալ՝ մեծապես պայմանավորված է մարդու ***Էկոլոգիական կուլտուրայով:***

Դասական բանաձևմամբ՝ Էկոլոգիական և վալեոլոգիական դաստիարակությունն ու կրթությունն, անհատի ձևավորման կարևորագույն բաղադրամասն են, որով անձը դաստիարակվում է շրջակա միջավայրի նկատմամբ ունեցած ճիշտ վերաբերմունքի պահանջներով և առողջ ապրելակերպով: Հատկապես մեր ժամանակներում հսկայական նշանակություն է ստանում աճող սերնդին բնության, շրջակա միջավայրի պահպանման, խելացի օգտագործման, վերարտադրման բնական նորմերով դաստիարակումը, որ ապահովի մարդկանց կենսագործունեությունը: Էկոլոգիական դաստիարակության ու կրթության կարևոր միջոց է ուսումնական հաստատություններում համալիր միջոցառումների անցկացումը բուսական ու կենդանական աշխարհի, օդային, ջրային ավազանների պահպանության գործում:

Երկիր կենդանի մոլորակը մեր միակ ընդհանուր տունն է, որը չի կարելի ոչ գնել, ոչ վաճառել: Մարդկությունն այդ կենդանի օրգանիզմի միայն մի մասն է, զգայական, հոգեկան մասը: Բայց մենք մոռացել ենք դրա մասին: Ներկա ճգնաժամը երկիր

մուլտրակի պատուասխանն է ներկայիս իրականացնող <<Էկոհանցագործության դեմ>>: (ՄԱԿ-ի գլխավոր գազաթաժողով, Նյու-Յորք, 2009թ. հունիսի 24-26) Եթե մարդկությունը շարունակի ապրել այնպես ինչպես հիմա է ապրում ապա 2030 թվականին էներգիայի և այլ պաշարների նկատմամբ իր պահանջները բավարարելու համար, ստիպված կլինի որոնել Երկիր մուլտրակի նման ևս մեկ մուլտրակ: Բնապահպանական իրավիճակը երկրագնդի վրա այնքան է վատացել, որ կոնկրետ օրինակով ցույց են տրվում այն բացասական փոփոխությունները, որոնք արդեն Յառկա են. ջերմոցային երևույթ, կլիմայի փոփոխություն, սառցեդաշտերի հալում, օզոնային շերտի քայքայում; Անհրաժեշտ է կրճատել „Էկոլոգիական ոտնահետքը,,

ԻՆՉ Է <<ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՏՆԱՀԵՏՔԸ >>

<<Էկոլոգիական ոտնահետքը>> մի նոր գիտություն է, որը հնարավորություն է տալիս հաշվարկել , թե մենք իրականում երկրագնդի մակերեսից ինչ չափով ենք օգտվում և հետևություն անել մեր կենսակերպի կայունացման մասին(կայուն է համարվում պաշարի այնպիսի օգտագործումը, որը չի գերազանցում դրա բնական վերարտադրության չափը): Երկրագնդի ցամաքային և ջրային տարածքը, որը կարող է ապահովել մարդկությանը սնվելու, հագնվելու ,տաքանալու և կացարան ունենալու, առողջ ապրելակերպ ունենալու համար անհրաժեշտ միջոցներով, ինչպես նաև կլանել ածխածնի երկօքսիդի արտանետումները և այլ թափոնները որոնք կազմում են 13.6 մլրդ. հեկտար: Եթե հաշվի առնենք, որ երկրագնդի բնակչության թիվը ներկայումս մոտ 7.5 մլրդ . է, ապա ստացվում է որ մուլտրակի վրա յուրաքանչյուր մարդու բաժին է ընկնում 2 հեկտար տարածք: Մեզանից յուրաքանչյուրի „Էկոլոգիական ոտնահետքը ,, միջինում կազմում է 2.7 հա: Դա նշանակում է, որ սննդով, վառելիքով և հագուստ ու կացարան ունենալու համար անհրաժեշտ նյութերով իրեն ապահովելու համար , մուլտրակի յուրաքանչյուր բնակիչ օգտագործում է երկրագնդի 2.7 հա ցամաքային և ջրային տարածք: Մինչդեռ այդ կարիքների բավարարման համար, Երկիր մուլտրակը յուրաքանչյուրիս կարող է հատկացնել ընդամենը 2հա

տարածք: Թվերը ցույց են տալիս, որ մենք պարտք ենք բնությանը , և այդ պարտքն օրեցօր աճում է: Այսօր անհրաժեշտ է փոխել մեր ապրելակերպը, աշխատանքը և հանգստի կազմակերպման ձևը: *Մարդը չպետք է օգտագործի Երկիր մոլորակի պաշարներից ավելին, քան էկոհամակարգերը կարող են վերարտադրել:*

Մարդու գործունեության հետևանքով ավելացել են ածխածնի երկօքսիդի արտանետումները, որն ավելի շատ է, քան մոլորակն իվիճակի է կլանել: Յուրաքանչյուր 1տ. ածխածնի երկօքսիդ կլանելու համար պահանջվում է 0.35 հա. անտառ: Հարուստ երկրներում յուրաքանչյուր սպառողի գործունեության հետևանքով առաջացած ածխածնի երկօքսիդի արտանետումների տարեկան ոտնահետքը համարժեք է 6 ֆուտբոլի խաղադաշտի չափ տարածքի՝ 2.66 հա:Այդ արտանետումների հետևանքով առաջացող կլիմայի փոփոխության հետևանքով ավելացել է բնական աղետների քանակը և դրանց ուժգնությունը: Հարյուրավոր տարբեր տեսակների պոպուլյացիաների թիվը 1970-ական թ.-ից սկսած նվազել է միջինում 1/3-ով: Տարբեր երկրների և բնակավայրերի էկոլոգիական ոտնահետքերը տարբեր են: Զարգացած արդյունաբերական երկրների ոտնահետքը շատ ավելի մեծ է քան չզարգացող երկրներինը: Օրինակ ԱՄՆ-ի բնակիչը տարեկան սպառում է միջինում 9.4 հա-ին համարժեք ռեսուրսներ , որը մոտ 5անգամ գերազանցում է 7յուրաքանչյուր բնակչին հասանելիք բաժինը: Այլ կերպ ասած, եթե երկրագնդի վրա յուրաքանչյուր մարդ ապրի այնպես ինչպես միջին

ամերիկացին է ապրում, ապա նման կենսակերպն ապահովելու համար անհրաժեշտ կլինի Երկիր մոլորակի ռեսուրսներն ունեցող ևս 5 մոլորակ: Եվրոպայի յուրաքանչյուր բնակիչ տարեկան օգտագործում է 5 հա -ին համարժեք ռեսուրսներ :Եթե մեր մոլորակի յուրաքանչյուր բնկիչ ապրի Եվրոպացու կենսակերպով, ապա մեզ անհրաժեշտ կլինի երկրագնդի նման 3 մոլորակ: Թերևս ոչ բոլորը գիտեն, որ այսօր աշխարհում զարգանում է այնպիսի ուղղություն, ինչպիսին է <<**Կանաչ հոսթինգը**>>:Սա ինտեռնետային հոսթինգ ծառայության տեսակ է, որն օգտագործում է կանաչ տեխնոլոգիաներ՝ կլիմայի և

շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու համար:Այդ հոսթինգների աշխատանքի սկզբունքն ածխաթթու գազի արտանետումների փոխհատուցումն է՝ վերականգնվող էներգիայի (արևի , քամու, ջրի) աղբյուրների օգտագործում, ծառատունկ և այլ գործողություններ, որոնք ուղղված են էներգիայի խնայողությանն ու արտանետումների կրճատմանը:Որպես կանաչ հոսթինգի տարբերակ դիտարկվում են նաև, այսպես կոչված, <<Ամպային>> տեխնոլոգիաները:Դրանք թույլ են տալիս մի փոքր ավելի արդյունավետորեն օգտագործել հաշվողական հզորությունները: Տեկատվական տեխնոլոգիաների ոլորտը պատասխանատու է ածխաթթու գլոբալ արտանետումների մոտ 2-2.5%-ի համար:Առավել կարևոր դեր են խաղում անհատական համակարգիչները և մանիտորները՝ SS ոլորտի բոլոր արտանետումների 40%-ը:Տեխնիկական գյուտերը կատարելագործվում են ամեն օր, սակայն օգտագործվում է դրանց միայն մի փոքր մասը:Ի վերջո, որպեսզի նոր գյուտը հնի փոխարեն դրվի կիրառության մեջ, մեծահասակների պետք է հաղթահարեն իրենց սովորությունների իներցիան:Նախ և առաջ պետք է ժամանակ գտնել ծանոթանալու նոր գյուտին:Երկրորդ, պետք է ծախսել գումար և ջանքեր, օրինակ՝ հին հաստոցից ազատվելու և այն նորով փոխարինելու, ապա մարդկանց, որոնք աշխատում էին հին հաստոցի վրա, նոր հաստոցի օգտագործման կանոնները սովորեցնելու համար:Հետագայում այդ ծախսերը կփոխհատուցվեն և շահույթ կբերեն, սակայն դա միանգամից չի լինի և, հետևաբար, ոչ բոլորն են պատրաստ նման ջանքերի հանուն ապագայի:Երրորդ,այն մարդիկ,որոնք գումար էին վաստակում հին սարքավորումների վաճառքից,չեն ուզում կորցնել իրենց բիզնեսը:Նրանք կարող են ամեն կերպ խոչընդոտել նոր տեխնոլոգիաների ներդրումը՝ մարդկանց հրահրելով և անգամ դիմել գյուտերի հետ պայաքարի ապօրինի միջոցներին:Էներգիաարդյունավետությունը և էներգիախնայողությունը խիստ կարևոր են:Ընտանիքի համար դա նշանակում է կոմունալ ծախսերի կրճատում, էներգետիկ ընկերությունների համար՝ վառելիքի գծով ծախսերի կրճատում, այսինքն՝ էլեկտրաէներգիայի էժանացում երկրի համար՝ ռեսուրսների տնտեսում, արտադրողականության բարձրացում և արդյունաբերության մրցունակություն կլիմայի համար՝ ջերմոցային գազերի արտանետումների կրճատում:Հաշվարկված է, որ մեկ բջջային հեռախոսի

լիցքավորումը մեկ տարում պատասխանատու է 0,3 կգ ածխաթթու գազի արտանետման համար, իսկ եթե բջջային լիցքավորման սարքը մշտապես միացված է վարդակին, սակայն չի օգտագործվում, արտանետվում է 2,4 կգ ածխաթթու գազ:

Ածխաթթու գազի արտանետումները բջջային հեռախոսների օգտագործումից

1. 47կգ մեկ տարվա ընթացքում՝ օրական երկու րոպե օգտագործելու դեպքում
2. 1250կգ մեկ տարվա ընթացքում՝ օրական մեկ ժամ օգտագործելու դեպքում
3. Մեկ րոպեն մոտավորապես 57գր
4. Մեկ SMS հաղորդագրությունը 0,014 գր
5. Մեկ որոնումը Google- ում 0,2 գր (Google-ի օգտագործումից տարեկան արտանետումները կազմում են 1,3 մլն տոննա

Մենք պետք է սովորենք ապրել մեր մոլորակի բնական <<բյուջեի>> սահամաններում եթե ցանկանում ենք խուսափել լայնամասշտաբ երաշտներից , սննդի պակասից, զանգվածային գաղթերից և այլն: Մենք պետք է գտնենք կայուն զարգացման ուղիներ որոնք կօգնեն բարելավել մարդու պահանջները սննդի , հագուստի, էներգիայի , առողջության, կրթության , տեղից տեղ փոխադրվելու և հանգստի նկատմամբ:

Աշխարհը բավականաչափ մեծ է ցանկացած մարդու կարիքները բավարարելու, բայց չափազանց փոքր է, որ բավարարի մարդկային ազահությունը:

Տասր հարց, որոնք կարող են փոխել մեր կյանքը և << առողջացնել >> մոլորակը

Հարց 1. Որպես սնունդ օգտագործում եք...

1. Հիմնականում սեզոնային, թարմ և տեղական արտադրության մրգեր քանջարեղեններ
2. Հիմնականում թարմ սննդամթերքներ, սակայն դեմ չեք նաև որոշ սառեցրած և պահածոյացված մթերքների օգտագործմանը
3. Հիմնականում սառեցված, պահածոյացված, ոչ սեզոնային և ներկրված սննդամթերքներ
4. Հիմնականում վերամշակված, սառեցված, պահածոյացված և ոչ սեզոնային սննդամթերքներ, նաև շատ հաճախ սնվում եք ռեստորանում

Հարց 2. Որքա՞ն հաճախ եք ուտում միս կամ ձուկ

1. Երբեք
2. Ժամանակ առ ժամանակ (շաբաթական 1- անգամ)
3. Շաբաթական 4-5անգամ
4. Ամեն օր

Հարց 3. Դուք ապրում եք

1. Փոքր բնակարանում
2. Միջին չափսի բնակարանում
3. Ընդարձակ բնակարանում կամ փոքր առանձնատանը
4. Մեծ առանձնատանը

Հարց 4. Ձեր տունը...

1. Շատ լավ ջերմամեկուսացված է և ջեռուցումից գտվում եք միայն անհրաժեշտության դեպքում

2. Լավ ջերմամեկուսացված է, սակայն տունը չափից ավել է տաքացվում
3. Վատ է ջերմամեկուսացված
4. Վատ է ջերմամեկուսացված և համարյա ամբողջ ժամանակ տաքացվում

Հարց 5. Ինչպե՞ս էք տաքացնում Ձեր տունը

1. Գազով
2. Ածուխով
3. Փայտով
4. Էլեկտրաէներգիայով

Հարց 6. Ի՞նչ էներգիա էք օգտագործում Ձեր տանը

1. Դուք օգտագործում եք վերականգնվող << կանաչ >> էներգիա, օրինակ արևային, քամու միջոցով ստացվող և այլն, կամ օգտվում եք << կանաչ >>, այսինքն, շրջակա միջավայրի պաշտպանությանը նպաստող սակագներից
2. Դուք խնայողաբար եք օգտագործում էլեկտրաէներգիան
3. Ձեզ չի մտահոգում սպառված էլեկտրաէներգիայի չափը
4. Դուք հաճախակի օգտվում եք էլեկտրական թեյամանից, տաքացուցիչ, մազերը չորացնող սարքից

Հարց 7. Տանը դուք օգտագործում եք

1. Միայն վերամշակված թուղթ, բաժանորդագրված չեք որևէ ամսագրի կամ թերթի
2. Հիմնականում վերամշակված թուղթ, փոստով ստանում եք տարբեր նամակներ՝ ուղղված լայն հանրությանը, մեկ տպագիր թերթի ու ամսագրի բաժանորդ եք
3. Հիմնականում չվերամշակված թուղթ, փոստով ստանում եք մեծ թվով տարբեր նամակներ՝ ուղղված լայն հանրությանը, մի քանի տպագիր թերթի ու ամսագրի բաժանորդ եք

4. Միայն չվերամշակված թուղթ, փոստով ստանում եք մեծ թվով տարբեր նամակներ՝ ուղղված լայն հանրությանը, մի շարք տպագիր թերթերի ու ամսագրերի բաժանորդ եք, հաճախ եք օգտվում տպիչից և պատճենահանող սարքից

Հարց 8. Դուք /կամ Ձեր ընտանիքը/ օգտվում եք մեքենայից

1. Երբեք/մենք երբեք մեքենա չենք ունեցել/
2. Երբեմն
3. Ամեն օր
4. Ամեն օր՝ երկար ճանապարհ անցնելու համար

Հարց 9. Դուք/ կամ Ձեր ընտանիքը/ օգտվում եք հասարակական փոխադրամիջոցներից

1. Երբեք
2. Երբեմն
3. Ամեն օր
4. Ամեն օր՝ երկար ճանապարհ անցնել համար

Հարց 10. Որտե՞ղ եք անցկացնում Ձեր արձակուրդը

1. Տանը
2. Տանից ոչ հեռու գտնվող որևէ հարմար վայրում կամ տեղական հանգստյան տներից/ առողջարաններից որևէ մեկում
3. Մեկնում են այնպիսի վայր, ուր ինքնաթիռով հնարավոր է հասնել մի քանի ժամում
4. Ինքնաթիռով մեկնում եմ էկզոտիկ վայրեր

Այժմ հաշվենք միավորները

10-20 միավոր: Կեցցե՛ք: Դուք գիտակից քաղաքացի եք և խելացի սպառող: Երկիր Մոլորակը հուսալի ձեռքերում է: Ձեր էկոլոգիական ոտնահետքը կազմում է տարեկան 2-4 գլոբալ հա կամ 20-40000մ²: Եթե ուզում եք ապագայում բարելավել Ձեր միավորները, ծանոթացեք ստորև ներկայացվող առաջարկներին:

Միգուցե այնտեղ լինեն կենսակերպին վերաբերվող այնպիսի մոտեցումներ, որոնք դեռ չեք փորձել, սակայն կիրառելու դեպքում, կարող են օգտակար լինել:

20-30 միավոր: Արդյունքը վատ չէ, սակայն, միանշանակ, բարելավման կարիք ունի:

Ձեր էկոլոգիական ոտնահետքը կազմում է տարեկան 4-6 գլոբալ հա կամ 40-60000մ²/այսպիսի կենսակերպով ապրելու համար, կպահանջվի 2-3մոլորակ/:

Հետևաբար , եթե ուզում եք բարելավել Ձեր միավորները, ծանոթացեք ստորև բերվող

առաջարկներին և մտածեք , ինչպես կրող եք կրճատել Ձեր ոտնահետքը՝ էկոլոգիական տեսանկյունից առավել կայունության հասնելու համար:

30-40 միավոր: Այսպիսի կենսակերպն անընդունելի է: Դուք ջանքեր պետք է գործադրեք՝ Ձեր կենսակերպը փոխելու համար: Եթե աշխարհում բոլոր մարդիկ ապրեին Ձեզ նման, ապա մեզ հարկավոր կլինեին 3-4 մոլորակ: Ձեր էկոլոգիական

Ոտնահետքը կկրճատվի 1/3 –ով, եթե սկսեք իրականացնել հետևյալ 10 քայլերը:

Ինչպես կրճատել <<էկոլոգիական ոտնահետքը>>

Am² իրական էկոլոգիական ոտնահետք

1. Նախ, վերոհիշյալ հարցերի պատասխանների արդյունքում ստացված միավորները բազմապատկեք 2000-ով, որպեսզի պարզենք, թե ինչքան է կազմում ձեր <<էկոլոգիական ոտնահետքը>>:

Միավորը _____ x2000=

2. Կարդացեք ստորև առաջարկները և ընտրեք այն քայլերը, որոնք պարտավորվում եք կատարել:

Ես պատրաստ եմ

Ոտնահետքի կրճատում

1.Ցնցուղ ընդունելու տևողությունը պակասեցնել 3 բոպետով:	660մ ²
2.Հրաժարվել փոստով հանրությանն ուղարկված տարբեր նամակների ստացումից:	180մ ²
3.Օգտվել <<կանաչ>> էներգիայի աղբյուրներից (յուրաքանչյուր կվ/ժամ վերականգնող էներգիան 1.8 քառ. մ-ով կրճատում է ռոտնահետքը):	3500մ ²
4.Շաբաթը 2 անգամ մսի փոխարեն օգտագործել բուսական Մենդամթերք:	1600մ ²
5.Օգտագործել վերամշակված թուղթ՝ չվերամշակվածի փոխարեն:	540մ ²
6.Կերակուր պատրաստելիս, կաթսան կամ թավան ծածկել կափարիչով:	400մ ²
7. 5կմ-ից պակաս երկարության ճանապարհը գնալ ոտքով կամ հեծանիվով:	590մ ²
8.Անձնական մեքենայում չօգտագործել օդորակիչ:	510մ ²
9.Աշխատավայր հասնելու համար, անձնական մեքենայի փոխարեն օգտվել հասարակական փոխադրամիջոցից:	6300մ ²
10.յուրաքանչյուր երկրորդ տարին արձակուրդն անցկացնել բնակավայրից ոչ հեռու:	2100մ ²

B

3. B տատով նշված վանդակում գրեք այն թիվը որը ստացել էք ձեր ընտրված պարտավորությունների դիմաց նշված թվերը գումարելու արդյունքում:

A
B

4 A Վանդակում նշված թվից հանեք B վանդակի թիվը և կստանաք ձեր նոր <<ռոտնահետքը>>:

- 1 Մինչև 20 000մ Կեցցեք: Դուք ապրում եք <<մեր մոլորակ>>
կենսակերպարով:
- 2 20 000մ -40 000մ Վատ չէ: << Մեր մոլորակ>> կենսակերպը համարյա
թե իրողություն է: Շարունակեք այդպես առաջ գնալ և կատարել ձեր խոստումները:

բայց մի մոռացեք ետ դառնալ և կրկին աչքի անցկացնել ցանկում ներկայացված առաջարկները, որպեսզի տեսնեք, արդյոք կան գործողություններ, որոնք նույնպես հնարավոր է կատարել:

3 40 000մ-60 000մ Դուք ապրում եք այնպիսի կենսակերպով, որը հնարավոր է 3 մոլորակի գոյության պարագայում: Հուսով ենք, այս ուղեցույցը կօգնի փոխել Ձեր կենսակերպը:

4 60 000մ –ից ավել Ձեր կիենսակերպն անթույլատրելի է: Լավ կլինեք մտածե՞իք, թե ինչպես եք ապրում, աշխատում և

Էկոլոգիայի և վալեոլոգիայի

հիմնախնդիրը, նպատակը, ուսումնասիրման մեթոդները և արդիականությունը;

Վալեոլոգիայի առողջության, մշակույթի և կրթության էկոլոգիական և վալեոլոգիական դաստիարակությունը նպատակ ունի վերականգնել էկո համակարգը, մարդու միտքն ու առողջությունը; վերաբերմունքն է անհատականության զարգացման գործընթացում:

Էկոլոգիական և վալեոլոգիական գիտության ուսումնասիրման մեթոդներն են՝ փորձարարական, նկարագրական և վերլուծական, որոնք իրար լրացնելով տալիս են լավ արդյունք:

Արդիականությունը

-Գիտատեխնիկական առաջընթացն անհնար է կանգնեցնել և անիմաստ է այդ մասին խոսելը; Այո՝ մարդը վերափոխել է բնությունը, ուստի անհրաժեշտ է գիտություն՝ վերափոխված բնության մասին, հարկավոր է գիտություն բնության և հասարակության դինամիկ հավասարակշռության պահպանման մասին; Դա էկոլոգիա և վալեոլոգիա գիտությունն է; Դրա բացակայությունը բերում է մարդու ժառանգական լիարժեքության վտանգմանը, որն էլ իր հերթին բերում է տարաբնույթ հիվանդություններ:

Մեզ անհրաժեշտ է առողջ մոլորակ,առողջ սերունդ և առողջ հոգի առողջ մարմնում;

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

✓ Հայտնի է, որ ներկայումս Էկոլոգիան այն գիտությունն է, որը կոչված է վերլուծել և սինթեզել կենսոլորտի վերաբերյալ առկա հսկայածավալ տեղեկատվությունը: Ինտեգրման նշված գործընթացի համար սակայն անհրաժեշտ է որոշակի սկիզբ: Իր բնույթով, հիմնարարությամբ և մասշտաբներով ֆիզիկան, ըստ էության, կարող է ծառայել որպես այդպիսի սկիզբ: Նկատենք, որ միայն բնության մասին հիմնարար գիտությունների սկզբունքներին հենվելու դեպքում Էկոլոգիան, որպես գիտություն, կարող է լուծել իր առջև դրված խնդիրները: Արդեն տեսանելի են նաև ֆիզիկայի՝ որպես գիտության կողմից ուսումնասիրվող Էկոլոգիական այն հիմնախնդիրները, որոնց հանգուցալուծմամբ զբաղվում է Էկոլոգիական ֆիզիկան:

✓ Իրավիճակն այնպիսին է, որ Էկոլոգիայի հիմունքների և շրջակա միջավայրին գիտակցված հարաբերվելու հիմնահարցերն անարգելք մուտք է գործել կրթական համակարգ՝ ընդգրկելով նրա բոլոր աստիճանները: Անհրաժեշտություն է առաջացել կրթական տարբեր աստիճաններում այն ոչ միայն ուսումնասիրել ոչ միայն առարկա, այլև հնարավորինս Էկոլոգացնել դպրոցական մյուս առարկաները: Առողջ ապրելակերպի ընդգրկումը կրթական ծրագրերում նման է առողջությանը սպառնացող վարակիչ հիվանդությունների դեմ համընդհանուր պատվաստմանը՝ այն կարող է դեռահասներին և երիտասարդներին պաշտպանել անխոհեմ վարքագծի հետևանքներից: Պատանիները կյանքի տարբեր իրավիճակներում պետք է կարողանան ճիշտ կողմնորոշվել և որոշում կայացնել հոգուտ սեռական և վերարտադրողական առողջությունն ապահովող վարքագծի:

<<Առողջությունն ամեն ինչ չէ, բայց ամեն ինչ ոչինչ է, երբ չկա առողջություն>>

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- 1.Ռ.Մարախյան,Ա.Հովսեփյան <<Հայաստանի էկոլոգիական իրավիճակը, էկոլոգիական դաստիարակություն>>
- 2.Լ.Ալեքսանյան << Առողջ ապրելակերպ>>
- 3.Ս.Նիկոլանա <<Երիտասարդ էկոլոգ>>
- 4.Լ.Ֆեսկյուկովա <<էկոլոգիական դասեր>>
- 5.Ա.Զվերև <<էկոլոգիա>>
- 6.Կլիմայի փոփոխության մասին երկրորդ ազգային հաղորդագրություն:
Carbon Footprint- What is a Carbon Footprint?
<http://www.carbonfootprint.com/carbonfootprint.html>